

ԺԻԼԲԵՐՏ ՄԵՇԲԱՆԲԱՐՅԱՆՍ

Թեհրանի Հայոց Թեմի

Հայերէնագիտական երեկոյեան դասընթացներ

ՍԵՖՅԱՆ ԴԱՐԱՇՐՁԱՆԻ ՍԿՉԲՆԱԴՔՈՒՐՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԺԷ. – ԺԸ. ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Բանալի բառեր՝ Սեֆյան, սկզբնաղբյուրներ, Թարիխ-ե ալամ արայե Աբբասի, Թագքիրաթ ալ-մուլուք, Դասթուր ալ-մուլուք, Մոխթասար-ե մոֆիդ, վարչա-տնտեսական, Զուխուր-Սա'դ, Ղարաբաղ:

Այս հրապարակման համար որպէս Հայաստանի ԺԷ.–ԺԸ. դարերի պատմութեան աղբյուր օգտագործել ենք Սեֆյան Իրանի հետևյալ պատմական երկերը՝ Իսքանդար Բեկ Թորքեման Մունշիի Թարիխ-ե ալամ արայե Աբբասի («Աշխարհը զարդարող Աբբասի պատմությունը»), Միրզա Սամի'այի Թագքիրաթ ալ-մուլուք («Արքաների հիշատակարան»), Մուհամմեդ Ռաֆի Անսարի կամ Միրզա Ռաֆի'այի Դասթուր ալ-մուլուք («Արքաների հրաման») և Մուհամմեդ Մոֆիդ Մուսթուֆի Բաֆեղիի Մոխթասար-ե մոֆիդ («Օգտակար համառոտագրություն»):

Սեֆյան պետության ձևավորման գործընթացի պատմության կարևոր սկզբնաղբյուրներից է Շահ Աբբաս Ա.-ի ժամանակակից Սեֆյան արքունիքի դպիր Իսքանդար Բեկ Թորքեման Մունշիի (1560/1-1633/4թթ.) «Աշխարհը զարդարող Աբբասի պատմությունը»¹ աշխատությունը: Նա հայտնի է Մունշի (պարսկ. քարտուղար) անվամբ: Ապրելով և ստեղծագործելով արքունիքում, Մունշին իրադարձությունների ականատես ու մասնակիցն է եղել: Նրա գրքում Շահ Աբբաս Ա.-ի ժամանակաշրջանի դեպքերը նկարագրվում են ամենայն բժախնդրությամբ և մանրամասնորեն:

Գիրքը բաղկացած է առաջաբանից ու երկու մասից. առաջինն ընդգրկում է մինչև շահ Աբբաս Ա.-ի գահակալության ժամանակաշրջանի պատմությունը, իսկ երկրորդը՝ նրա թագավորության պատմությունը երկու փուլով՝ նախ առաջին երեսուն տարիների ժամանակահատվածը, ապա՝ հետագա տարիներինը մինչև, շահ Աբբաս Ա.-ի մահը, որից հետո Մունշին պատմությունը շարունակում է,

¹ اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، موسسه انتشارات امیر کبیر، تهران، 1392

ընդգրկելով շահ Սեֆի Ա-ի ժամանակաշրջանը, սակայն աշխատանքն ընդհատվում է հեղինակի մահով:

Մունշին հիշատակում է բազմաթիվ հայկական բնակավայրերի անուններ, այդ թվում՝ Փոքր Արմենիան: Փոքր Արմենիա անվանումն առաջին անգամ հանդիպում ենք աշխատության առաջին հատորում, Սեֆյան Սուլթան Մուհամմեդի գահակալության շրջանում և պարբերաբար օսմանյան թուրքերի հետ տեղի ունեցող պատերազմների հիշատակման առիթով, ուր հեղինակը նշում է Չուխուր-Սա'դը՝ օսմանցիներին անցնելու իրողությանը՝ «....Չուխուր-Սա'դ բարեշեն շրջանը, որ Փոքր Արմենիայի մեծ մասն է, անցավ թշնամիների ձեռքը...»³:

Երկրորդ հատորում հեղինակը շահ Աբբաս Ա-ի գահակալության քսանմեկերորդ տարվա գլխի հետևյալ ենթագլխում՝ «Ամիր Գունե խանի իրավիճակի և որոշ բերդերի գրավման և հաղթանակների, որոնք իրականացվեցին շահի հովանավորության շնորհիվ, տեղի ունեցան Երևանում, և պարտավոր էինք դրանք նշել», գրում է. «Այս դեպքերից հետո Կարսի բերդը հարգարժան խանի ջանքե-

² Չուխուրսաղ կամ Երևանի վիլայեթի կուսակալությունը (վիլայեթ, խանություն, փաշայություն, բեյլարբեյություն, սարդարություն) ձևավորվել է կարա-կոյունլու թուրքական ցեղերի տիրապետության շրջանում: Թուրքական մի քանի ցեղ XIV դարի վերջերին արդեն միավորված էին ում Ամիր-Սաադի իշխանության ներքո, և դրանք իրենց ցեղապետի անունով հետագայում կոչվեցին սաադլուներ: Նրա անունով են կոչվել նաև այդ ցեղերի բնակության շրջանները՝ հին Արշարունիք կամ Երասխաձոր (այժմ Կադզվան), Ճակատ (Սուրմալու) ու մասամբ Մասյացոտն գավառներն ու հարակից մի քանի շրջան: Դրանք բոլորը միասին կազմեցին մի կուսակալություն, որը Ամիր-Սաադի անունով օտարները կոչեցին Չուխուր-Սա'դ կամ Չուգուր-Սաադ, իսկ հայերը՝ Սաաթի փոս կամ Սահաթափոս (Սահադիփոս): Հ. Փափագյանը, վկայակոչելով Մատենադարանի արխիվային ֆոնդերից մի կալվածագիր (Ֆ. Կաթողիկոսական դիվան դ. թղթապանակ 1 գ. վավ. 1004), գրում է, որ «Չուխուր-Սա'դ» անվան առաջին հիշատակությունը, ինչպես նաև այժմ է հայտնի, վերաբերում է 1428 թվականին, միաժամանակ նշելով, որ այդ անունը պետք է տրված լիներ Ամիր-Սաադի կենդանության օրոք՝ XIV դ. վերջերին (տե՛ս Հ. Գ. Փափագյան, «Օտար տիրապետությունը Արարատյան երկրում», *Տեղեկագիր ՀՍՄՀ ԳԱ* (հաս. գիտութ.), 1960, № 7—8, էջ 25): Մեզ հետաքրքրող ժամանակների պարսկական մատենագրության մեջ «Չուխուր-Սա'դը» քաղցմանվել է «Երջանիկ փոս» կամ «Երջանիկ հովիտ» իմաստով: Այդ կուսակալության Չուգուր-Սաադ անունը գործածական է եղել պարսկական ու թուրքական մատենագրության մեջ: Մեր աղբյուրները, ինչպես ասվեց, Չուգուր-Սաադ վիլայեթը սովորաբար կոչել են Սահաթափոս: Այդ օտար անունների հետ գործածության մեջ էին մնացել նաև հին հայկական վարչատարածքային միավորների՝ Արարատյան երկրի, Կոտայք գավառի և այլոց անունները, չնայած դրանք տարածվել լիովին չէին համընկնում նշվածների հետ: Չուգուր-Սաադ, Սահաթափոս, Արարատյան երկիր և մյուս անունները գործածությունից դուրս էին եկել, միայն առաջինը շարունակել է որոշ չափով գործածական մնալ թուրքական ու պարսկական աղբյուրներում՝ ընդհուպ մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը, տե՛ս Թ. Հակոբյան, *Երևանի պատմությունը (1500—1800 թթ.)*, Երևան, 1971), էջ 138-139:

³ اسکندر بیگ ترکمان، عالم آرای عباسی، նույն տեղում, էջ 293:

րով անցավ մեր թագավորության ենթակաների հսկողությանը, Կարսի վիլայեթը Փոքր Արմենիայի տարածքներից է, որ գտնվում է Երևանի և Հերզուլումի միջև»⁴։ Այդ հատորի, Շահ Աբբաս Ա-ի գահակալության քսաներեքերորդ գլխի հետևյալ ենթագլխում՝ «Հիշատակում այն իրադարձությունների, որոնք տեղի ունեցան Լոռիի, Թիֆլիսի ու Թումանոսի (Դմանիս) բերդերի և Գյանջալի (Գանձակ) բերդի ու Ղարաբաղի մուլքի գրավումից հետո», Մունշին նույնիսկ Թիֆլիսի գրավման ժամանակ հիշատակում է քրիստոնյա հայերին և նշում. «...Այդ քաղաքի բնակիչները հիմնականում բաղկացած էին քրիստոնյա հայերից (արամաներից), վրացիներից ու փոքր քանակությամբ մուսուլմաններից, իսկ քաղաքի զանազան վայրերում նկատելի էին քրիստոնեական հնագույն աղոթավայրեր, եկեղեցիներ»⁵։

Օսմանյան կայսրության նշանավոր սուլթաններից Սուլեյմանի (1494-1566) հետ պատերազմից հետո ղրզլբաշների զորապետներից Համայիլ Միրզան և Աբդալահ խանը օսմանյան զորքի հետ համատեղ արշավանքից հետո Երևանի ճանապարհով անցնում են Ղարաբաղ։ Դեպքը հետևյալ կերպ է նկարագրում հեղինակը. «... այդ պայքարի մեջ շուրջ քսան հազար օսմանցի ենթարկվեցին մեր հզոր բանակի հարձակմանը, այնուհետև վերադարձին Արզանի ճանապարհից թեքվեցինք և Երևանի վրայով ուղևորվեցինք դեպի Ղարաբաղ»⁶։

Մունշին բազմիցս անդրադառնում է Ղարաբաղին, նրա բարեբեր բնությանը և այն տնտեսական առավելություններին, որոնցից օգտվում էին Ղարաբաղում հաստատված պարսիկ իշխանավորները, իսկ երբ Սեֆյան Իրանի և օսմանցիների միջև տեղի ունեցող հերթական պատերազմների արդյունքում շահը հրամայում է թողնել Ղարաբաղը, բայց նրանք հրաժարվում են հրամանը կատարել, այդ իրողությանը Մունշին անդրադարձել է երկրորդ հատորի՝ շահ Աբբաս Ա-ի գահակալության երրորդ տարվա գլխի հետևյալ ենթագլխում՝ «Զանանզան դեպքեր, որոնք տեղի ունեցան այս տարվա մեջ բախտորոշի (այսինքն՝ շահի) շնորհիվ»։ Նա գրում է. «...այն վիլայեթի օդ ու ջուրը բարեբեր էր Ղաջարի ցեղի ցեղապետների համար, որոնք հաստատվելով Ղարաբաղում բազում հարստությունների էին տիրացել և հրաժարվում էին թողնել այդ շրջանները...»⁷, որից հետո շահը նրանց համոզելու համար խոստանում է՝ «...Ղարաբաղը ոչ մի տեղ չի գնում, եթե Աստված կամենա, նորից այն կգրավենք, իսկ եթե Աստծու կամքը դրան հակառակ լինի, ճակատագրից փախչել չի լինի, սակայն մենք հույս ունենք, որ շուտով Աստծու կամոք նորից այն մեր հսկողության տակ կառ-

⁴ اسکندر بیگ ترکمان، عالم آرای عباسی، 740:

⁵ Նույն տեղում, էջ 718:

⁶ Նույն տեղում, էջ 73:

⁷ Նույն տեղում, էջ 416:

նենք...»⁸։ Մունշու հիշատակումը ապացուցում է, որ Ղարաբաղը պարսիկ իշխանավորների համար թե՛ որպես հանգստավայր է ծառայել, և թե՛ տնտեսական խոշոր շահ ապահովել, որից պարսիկ իշխանավորները ոչ մի կերպ չէին ցանկանում հրաժարվել։

Մունշիի աշխատության մեջ բազմիցս հանդիպում ենք Երևան, Երևանի բերդ, Զուխուր-Սա'դ, և հայկական այլ տեղանունների, որոնք գլխավորաբար վերաբերում են պարսկական բանակի տեղաշարժերի, ինչպես նաև բանակի զորավարների և հայկական բնակավայրերում նրանց գործողություններին, որոնց հետևանքով հայ ընտանիքներ են տեղահանվել։ Մունշին գրում է. որպեսզի արևելյան Հայաստանի վրա հարձակված օսմանցիներն արշավանքների ընթացքում ոչ մի տեղ բանուկ բնակավայրի չհանդիպեին, շահը հրամայում է տեղահանել հայ բնակչությունը։ Այս առիթով երկրորդ հատորի՝ շահ Աբբաս Ա-ի գահակալության տասնութերորդ տարվա գլխի «Հիշատակում որոշ իրադարձությունների և իրավիճակների մասին, որոնք ի հայտ եկան մինչև օսմանյան Ջաղալ Օղլի անունով հրամանատարի ժամանումը» ենթագլխում կարգում ենք. «...և զորավարները ենթարկվելով ամենազորի հրամանին Հասան Ղալայի մոտ, որը գտնվում է Կարսի և էրզրումի միջև, կատարելով ամենազորի հրամանը, բոլոր բնակավայրերը և արոտավայրերը այրեցին, նաև երկուսից երեք հազար հայ ընտանիքների իրենց անասունների հետ գաղթեցրին դեպի սահմանից այս կողմ...»⁹։ Այս փաստը ևս փաստում է, որ հայ ազգաբնակչությունը Սեֆյան իշխանավորների կողմից շարունակ ենթարկվել է նմանօրինակ տեղահանությունների։

Մեկ այլ առիթով հիշատակվում է հայության կրոնափոխ անելու՝ պարսկական իշխանության փորձը։ Երրորդ հատորի՝ Շահ Աբբաս Ա-ի գահակալության երեսուն հինգերորդ տարում գլխի «Մի խումբ քրիստոնյաների իսլամի հրավիրելու» ենթագլխում Մունշին գրում է. «... Այս տարվա մեջ ամենակալ տիրոջ ցանկությունն է, որ մի խումբ հայերի և այլ քրիստոնյաների, որոնք բնակվում են Ֆարիդանի և Բախթիարի տարածքներում և այնտեղ զբաղվում են հողագործությամբ, կրոնափոխ դարձնելով հրավիրեն ենթարկվելու իսլամի օրենքներին...»։

Բազմաթիվ և բազմաբնույթ են Մունշիի աշխատության մեջ հայությանը և հայկական բնակավայրերին վերաբերող նյութերը, որոնք նպաստում են ժամանակաշրջանի պատմության տարաբնույթ հարցերի, Սեֆյան իշխանության ժամանակաշրջանում հայության իրավա-քաղաքական կարգավիճակի, սոցիալ-տնտեսական պատմության իրողությունների համակողմանի լուսաբանմանը։

⁸ اسکندر بیگ ترکمان، عالم آرای عباسی، 417 էջ։

⁹ Նույն տեղում, էջ 665-666։

Հաշվի առնելով Մունշիի աշխատության կարևորությունը ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրության տեսակետից, սույն կարճ ակնարկով պատմաբանների ուշադրությունն ենք հրավիրում դրան և վստահություն հայտնում, որ այն արժանի է առավել մանրամասն քննության:

Նախքան անդրադառնալը Սեֆյան իրանի վարչական պատմությանը նվիրված երկու սկզբնաղբյուրին, նշենք, որ դրանք է՝ Թագֆիրաթ ալ-մուլուֆ և Դասթուր ալ-մուլուֆ, քաղվածաբար կամ լրացումներով շարադրվել են միևնույն մայր աշխատության հիման վրա: Պարսիկ հետազոտող Դանեշվաժուհի կարծիքով՝ «Թագֆիրաթ ալ-մուլուֆ-ի, Դասթուր ալ-մուլուֆ-ի և նմանօրինակ գրքերի կազմումը տարածված է եղել Սեֆյան իշխանության սկզբնավորման ժամանակաշրջանից ի վեր: Նմանատիպ աշխատություններ ընդունված է եղել կազմել իշխող համակարգի առանձնահատկությունների նկարագրման համար, և յուրաքանչյուր գահակալի օրոք դրանք գրվել են գահակալող շահի անունից»¹⁰:

Դասթուր ալ-մուլուֆ-ը գրվել է նախքան Թագֆիրաթ ալ-մուլուֆ-ը: Սակայն հաշվի առնելով, որ Թագֆիրաթ ալ-մուլուֆ-ն առաջինն է ուսումնասիրվել և դրվել գիտական շրջանառության մեջ, նախ անդրադառնանք դրան:

Սեֆյան տիրապետության շրջանում Արևելյան Հայաստանում գործող վարչաքաղաքական համակարգի և Կովկասում ձևավորված վարչական միավորների ուսումնասիրման տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի 1726 թվականին Աշրաֆ աֆղանի հանձնարարությամբ Միրզա Սամի' ալի¹¹ պատրաստած Թագֆիրաթ ալ-մուլուֆ¹² («Արքաների հիշատակարան») աշխատությունը, ուր ներկայացված են Սեֆյան իրանի վարչական կառուցվածքը, արքունական պաշտոնները, հասարակության մեջ եղած բաժանումները, տնտեսական հարաբե-

¹⁰ دانش پژوه محمد تقی، "مقاله: دستورالملوک میرزا رفیعاً و تذکره الملوک میرزا سمیعاً"، منبع: زبان و ادبیات مجله دانشکده ادبیات، 484: 484، و علوم انسانی دانشگاه تهران، مرداد 1347، شماره 63 و 64،

¹¹ Պարսիկ գիտնական դոկտ. Մուհամմեդ Դաբիր Սիադին Միրզա Սամիա-ի մասին գրում է՝ «Հավանաբար Թագֆիրաթ-ալ-մուլուֆի անհայտ հեղինակ Միրզա Սամի' ան նույն ինքը Ամիր Մուհամմեդ Սամի Քարիանեն է՝ Ռուստամ ալ-թավարիխի հեղինակ Ամիր Շամսեդդին Մուհամմեդ Քարիանեի եղբայրը, որի ուղին՝ Ամիր Մուհամմեդ Հուսեյնը, և թողը՝ Աղա Մուհամմեդ Հաշեմ Ասեֆ Հուսեյնին, հայտնի էր Ռուստամ ալ հոֆամ աևունով»: Այսպիսով Դաբիր Սիադինն ցանկանում է բացահայտել, որ Միրզա Սամի' ան Ռուստամ ալ-թավարիխի հեղինակի հետ ամփոփական ազգակցական կապ է ունեցել: «Երկրորդ հրատարակության նախաբան»:
میرزا سمیعاً، تذکره الملوک، تهران، انتشارات، امیرکبیر، 1368، "مقدمه".

¹² میرزا سمیعاً، تذکره الملوک، تهران، انتشارات امیرکبیر، 1368
Միրզա Սամի' ալ-թագֆիրաթ ալ-մուլուֆ (արքաների հիշատակարան), Թարգմանությունը բնագրից և ծանոթագրությունները՝ Ք. Պ. Կոստիկյանի, Ժ. Վ. Մեղքանբարյանի, (ՀՀ ԳԱ, Արևելագիտության ինստիտուտ, Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին 18, Պարսկական աղբյուրներ Ա), Երևան, Հեղ. հրատ., 2019, 271 էջ:

րուծյունները, մարզերի հաքիմների եկամուտները և նրանց վճարած հարկերը, տեղեկություններ և վիճակագրական տվյալներ են հաղորդվում քաղաքներում տեղակայված զինվորական ուժերի և կառույցների եկամուտների, ծախսերի և պաշտոնյաներին վճարվող աշխատավարձերի մասին:

Թագիխաթ ալ-մուլում-ի զանազան գլուխներում հանդիպում ենք հայու-թյանը վերաբերող արտահայտությունների: Սահեբջամների¹³ աշխատանքների մասին երրորդ գլխի երկրորդ զաբեթեի (կանոնակարգերի) երկրորդ ենթագլխում բացատրվում է ջաբադարբաշի¹⁴ աշխատանքը. «...Այն ինչ երևանի ջաբախանեում (զինապահեստ) և այլ շրջաններում ու վիլայեթներում, որոնց մեջ արքայական ղուրխանե (պահեստ) գոյություն ունի, ջաբադարբաշին թահվիլ-դար (պատասխանատու) է նշանակում, որին ենթարկվում են վիլայեթների հաքիմները...»¹⁵: Վերջաբանի երկրորդ հոդվածի՝ բեկլարբեկությունների եկամուտներին վերաբերող գլխում, Չուխուր-Սա'դի բեկլարբեկության և ենթակա շրջանների եկամուտներին առանձին ենթագլուխ է հատկացվել, որտեղ կարգում ենք, «Չուխուր-Սա'դի և ենթակա շրջանների բեկլարբեկության մասին: Քսանհինգ հազար ինն հարյուր տաս թուման և վեց հազար երեք հարյուր և քսան վեց դինար»¹⁶, որից հետո նշվում են Չուխուր-Սա'դի ենթակա շրջանների եկամուտները: Նույն երկրորդ հոդվածում Չուխուր-Սա'դ բեկլարբեկությունից հետո նշվում է «Ղարաբաղի բեկլարբեկությունը և ենթակա շրջանները: Քսան-չորս հազար և յոթ հարյուր քսանվեց թուման և իննհարյուր յոթանասունութ դինար»¹⁷, այնուհետև խոսվում է Ղարաբաղի բեկլարբեկության ենթակա շրջանների եկամուտների մասին:

Գրքի վերջաբանում եղած հավելվածի առաջին հոդվածի մեջ ամիր շեքար բաշիին տրվող թիուլի¹⁸ և նրա եկամուտների առիթով ջուղայահայությունից

¹³ Սահեբջամ (صاحب جمع) – Այդպես էին կոչվում խասե-ե շարիֆի գործատների ու մյուս հաստատությունների ղեկավարները, որոնք գտնվում էին նազեր-ե բոյուքաթի անմիջական ենթակայության տակ:

¹⁴ Զինամթերֆի պահեստապահ:

¹⁵ ميرزا اسمعيل ، تذكره الملوك , նույն տեղում, էջ 29:

¹⁶ Նույն տեղում, էջ 75-76:

¹⁷ Նույն տեղում, էջ 75-76:

¹⁸ Թիուլ – (تجوّل) – Ֆեոդալական պարզական հողատիրության տարածված ձևերից մեկը: Պետական և գիմվորական ծառայության դիմաց թիուլներ էին տրվում ինչպես ամբողջական գյուղեր (եթե դրանք պետական «դիվանի» գյուղեր էին), այնպես էլ առանձին մուփային գյուղերից և այլ հարկատու օբյեկտներից ստացվող պետական հարկերը կամ դրանց մի մասը: Թիուլ ստացող ֆեոդալներն ու պետական-գիմվորական պաշտոնյաները անվանվում էին թիուլդարներ: Խոշոր թիուլդարները թիուլդարության ժամանակաշրջանում իրենց թիուլի սահմաններում բնակվող ռայաթների նկատմամբ ունեին նաև վարչական ու դատական իրավունք:

տարեկան հարկվող գումարի մասին նշվում է. «Ձուղայի հայությունն տարեկան վճարը հիսուն թուման...»¹⁹:

Թագֆիրաթ ալ-մուլուֆ-ի հեղինակը տեղեկություններ է հաղորդում բեկլարբեկությունների և վալիների եկամուտների, ինչպես նաև նրանց ենթակաների քանակի մասին, ուստի պարզվում է, որ հայկական բեկլարբեկություններից «Չուխուր-Սա'դ և ենթակա շրջաններ» 2860 հոգի աշխատող և 25910 թուման և 6326 դինար եկամուտ, իսկ «Ղարաբաղ և ենթակա շրջաններ» 1430 հոգի աշխատող և 24726 թուման և 978 դինար եկամուտ ունեին:

Թագֆիրաթ ալ-մուլուֆ-ի մեջ, բացի բեկլարբեկությունների ընդհանուր եկամուտներից նշվել են նաև նրանց ենթակա շրջանների եկամուտները: Առավել մեծաթիվ աշխատողներ գրանցված են Չուխուր-Սա'դում: Հայկական երկու բեկլարբեկությունների վճարած հարկերի գումարի չափը, մյուս բեկլարբեկությունների վճարների համեմատ, Ազարբայջանից հետո գտնվում էին երկրորդ և երրորդ տեղերում, քանի որ նրանց եկամուտի ընդհանուր գումարը ավելի բարձր էր, քան մնացյալ բեկլարբեկություններինը, հատկապես համեմատած խորասանի և Սուրբ Մեշհեդի հետ, որոնք երկրի կարևոր բեկլարբեկություններից էին: Նկատելի տարբերությունն ապացուցում է այն հանգամանքը, որ Արևելյան Հայաստանի բեկլարբեկությունները ոչ միայն ռազմական, այլ նաև տնտեսական առումով շատ կարևոր դիրք էին զբաղեցնում Սեֆյան համակարգում:

Թեև Թագֆիրաթ ալ-մուլուֆ-ի գրվելու ժամանակ (1726 թ.) հայկական բնակավայրերը գտնվել են օսմանյան տիրապետության ներքո, և աֆղանները չեն վերահսկել նշված տարածքները, այդուհանդերձ երկում նրանք ներառված են պարսից պետության ավանդական վարչական կազմի մեջ²⁰: Վարչական բաժանման վերաբերյալ կարդում ենք. «Իսկ հարգարժան բեկլարբեկությունները տասներեքն էին: Առաջին՝ Ղանդահար, երկրորդ՝ Շիրվան, երրորդ՝ Հարաթ, չորրորդ՝ Ազարբայջան, հինգերորդ՝ Չուխուր-Սա'դ, վեցերորդ՝ Ղարաբաղ և Գյանջա (Գանձակ), յոթերորդ՝ Աստարաբադ, ութերորդ՝ Քոհգիլուիե, իններորդ՝ Քիրման, տասներորդ՝ Մերվ Շահիջահան, տասնմեկերորդ՝ Ալիշաքար, տասներկուերորդ՝ Սուրբ Մեշհեդ և տասներեքերորդը՝ մայրաքաղաք Ղազվին»²¹»²²:

¹⁹ میرزا اسمعیل، تذکره الملوك، էջ 55:

²⁰ Թուրք-պարսկական պատերազմն (1723-1727) ավարտվեց օսմանցիների հաղթանակով և ամբողջ Արևելյան Հայաստանի ժամանակավոր գրավումով:

²¹ Թագֆիրաթ-ալ-մուլուֆի գրության ժամանակ Սպահանն էր Իրանի մայրաքաղաքը, սակայն գրքում հանդիպում են մայրաքաղաք Ղազվին բնորոշմանը. ընդունված էր նաև նախկին մայրաքաղաքներն էլ նույն կերպ անվանել:

²² Նույն տեղում, էջ 4-5:

"اما بیگلربیگان عظیم الشان ایران سیزده است: اول قندهار، دوم شیروان، سوم هرات، چهارم آذربایجان، پنجم چخور سعد، ششم قراباغ و گنجه، هفتم استرآباد، هشتم کوه گیلویه، نهم کرمان، دهم مروشاهی

Համաձայն Թագփրաթ ալ-մուլուֆ-ի կարելի է պատկերացում կազմել հայկական այդ երկու բեկլարբեկությունների ներքին վարչական բաժանումների մասին. Այսպես «Չուխուր-Սա'դ և ենթակա շրջաններ» գլխում հիշատակված են հետևյալ շրջանները՝ Թուման Նախիջևան, Մակու, Զարուզբիլ, Սեդարակ, Բայազետի բերդ, Շադիլու քրդական ցեղ, Դենբելի քրդական ցեղ, Մողազբերդի բերդը²³:

Իսկ համաձայն Թագփրաթ ալ-մուլուֆ-ի, Ղարաբաղի և ենթակա շրջանների բեկլարբեկության մեջ էին մտնում հետևյալ շրջանները՝ Զակամ, Բարդա, Ահնաբադ, Զավանշիր, Բարգուշատ, Ղարաաղաջ, Լոռի-Փամբակ, Օլբայե Արասբար և Բայազետիլու ցեղի տարածքներ, Օլբայե Սոմավի և Թարգյավաս²⁴:

Սեֆյան Իրանի վարչակառավարական բաժանումների՝ Թագփրաթ ալ-մուլուֆ-ի մեջ հիշատակված տեղանունները այն տարածքներն են, որոնցից հարկեր են գանձվել: Վարչական բաժանման այդ հանգամանքը շահարկման առիթ է դարձել Ազարբայջանցիների համար, որոնք ցանկացել են ստեղծել այնպիսի պատկեր, իբր Չուխուր-Սա'դի բեկլարբեկությունը մտնում է Ազարբայջանի բեկլարբեկության կազմի մեջ, մինչդեռ, համաձայն Թագփրաթ ալ-մուլուֆ-ի՝ Չուխուր-Սա'դը իրականում եղել է ինքնուրույն բեկլարբեկություն: Թագփրաթ ալ-մուլուֆ-ի²⁵ երկրորդ գլխի նախաբանի մեջ հեղինակը, երկրի տասներեք բեկլարբեկությունների անվանումները թվարկելիս, չորրորդ բեկլարբեկության անվան տակ նշում է Ազարբայջանի, հինգերորդ բեկլարբեկության անվան տակ Չուխուր-Սա'դի, իսկ վեցերորդի տակ՝ Ղարաբաղ և Գյանջա (Գանձակ), անունները առանց այդ բեկլարբեկությունները մտցնելու Ազարբայջանի կամ մի այլ բեկլարբեկության կազմի մեջ: Այդ կապակցությամբ ևս գրքի հավելվածների բաժնում, ուր ներկայացվում են բեկլարբեկությունների եկամուտները, դարձյալ Հայկական երկու բեկլարբեկությունների և նրանց ենթակա շրջանների եկամուտները առանձին են ներկայացվում, ինչը վկայում է, որ այդ բեկլարբեկությունները անկախ եղանակով են ղեկավարվել:

Հաստատելով հանդերձ Հ. Փափագյանի այն տեսակետը, որ ընդհանրապես մի քանի բեկլարբեկություններ տնտեսական առումով ենթակա էին մեկ գլխավոր բեկլարբեկության²⁶, այնուամենայնիվ կարելի է նաև պնդել, որ Թագփրաթ

جهان، یازدهم قلمرو علی شکر، دوازدهم مشهد مقدس معلی، سیزدهم دارالسلطنه قزوین.

²³ 75,76: «میرزا اسماعیل، تذکره الملوك»

²⁴ Նույն տեղում, էջ 75-78:

²⁵ Նույն տեղում, էջ 5:

²⁶ Այդ փաստի կապակցությամբ միանգամայն հիմնավոր են Հակոբ Փափագյանի հետևյալ բացատրությունները. «Հյուսիս-արևմտյան հարկային-ֆինանսական ստորաբաժանման մեջ մտնող չորս վիլայեթները ինֆնուրույն փաղափական-վարչական միավորներ էին: Ուշագրավ է, որ դրանցից Արարատյան երկիրը կամ Երևանյան նահանգը, որին ենթարկվում էր

ալ-մուլուֆ-ը կազմելու ժամանակաշրջանում արդեն իսկ յուրաքանչյուր բեկլար-բեկուլթյուն անկախ տնտեսական միավոր էր, որ ուղղակիորեն ենթարկվում էր կենտրոնական իշխանությանը:

Թագիփաթ ալ-մուլուֆ-ում հայկական երկու բեկլարբեկուլթյուններին վերաբերող տվյալները հաստատում են, որ դրանք մինչև Սեֆյան հարստության անկման ժամանակաշրջանը շահերի ուղադրության կենտրոնում են եղել:

Երրորդ սկզբնաղբյուրը Դասքուր ալ-մուլուֆ²⁷ («Արքաների հրաման») աշխատությունն է՝ Սեֆյան Իրանի պետականաւարման կառուցվածքի համապարփակ տեղեկագիր: Նրա հեղինակ Մուհամմեդ Ռաֆի Անսարին կամ Միրզա Ռաֆի՝ ան գիրքը պատրաստել էր մինչև աֆղանների կողմից Սպահանի գրավումը, Շահ Սուլթան Հուսեյնի գահակալության ժամանակաշրջանում և նրա անունից, 1723-1725թթ. ընթացքում: Միրզա Ռաֆի՝ ան ունեցել է մուսթովֆի ալ մամալիֆի²⁸ պաշտոն: Աղբյուրը, ներկայացնելով ղեկավարման կառույցի գործընթացները, հիմնականում ծանրանում է երկրի տնտեսության և երկրագործության վիճակի բարելավման, ղեկավարման, վարչական և զինվորական կառույցի ու նրա աստիճանակարգության վրա:

Դասքուր ալ-մուլուֆ-ում ևս հանդիպում ենք հայություն և հայկական բեկլարբեկուլթյուններին առնչվող հիշատակումների: Երկրի գլխավոր վարչական բաժանմանը նվիրված՝ երկրորդ գլխի հինգերորդ ենթագլխում թվարկվում են

նաև Նախիջևանի օլան, կոչվում էր Զուլուր-Սա՝դի բեկլարբեկություն, Գանձակն Արցախական աշխարհով՝ Գանձակի կամ Դարաբադի բեկլարբեկություն, Շամախին Աղվանից աշխարհի մեծ մասի հետ՝ Շիրվանի բեկլարբեկություն և միայն Թավրիզի նահանգը, կամ բուն Ատրպատականը՝ Ագերբայջանի բեկլարբեկություն (տե՛ս Խաֆանդար Մուհեթի, Թարիխ-ե Ալամարա-յե Աբբասի (ԹԱԱ), էջ 169, 492, 565, 683, 1026, 1030, 1041 և 1085): Սակայն այս բոլորն, ինչպես ասվեց, հարկային-ֆինանսական ենթակայության տեսակետից, մեկ ընդհանուր ղեկավարություն ունեին և հաշվետու էին հյուսիս-արևմտյան երկրամասի կամ «Ագերբայջանի» վեզիրի առաջ»։ **Հ. Դ. Փափազյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրեր, II, կալվածագրեր. պրակ առաջին (ԺԴ-ԺԶ դդ.), Երևան, 1968, էջ 145:

²⁷ میرزا رفیعاً، دستور الملوك، به کوشش و تصحیح محمد اسماعیل مارچینکوفسکی، ترجمه علی کردآبادی، با مقدمه منصور صفت گل، به سفارش مرکز اسناد و تاریخ دیپلماسی، تهران، وزارت امور خارجه، 5: مرکز چاپ و انتشارات، 1385، مقدمه اول،

²⁸ Մուսթովֆի (مستوفی) – Այսպես էին կոչվում պետության, արհունիքի, ինչպես նաև կրոնական հաստատությունների ֆինանսական, հաշվապահական գործերի գլխավոր կառավարիչները: Մուսթովֆիներ կային խոշոր նահանգային վարչական կենտրոններում, որոնք վերահսկում ու կառավարում էին տվյալ նահանգի կամ երկրամասի հաշվապահական գործերը: Մրանք ենթարկվում էին մայրաքաղաքում նստող մուսթովֆի ալ-մամալեֆին, որը երկրի ֆինանսական գործերի գերագույն կառավարիչն էր և հաշվետու էր միայն մեծ վեզիր է՝ թեմադ ալ-դովլեի առաջ: Նա հսկում էր պետական ամբողջ ելումուտը, նախապատրաստում էր բյուջեն և ստուգում տարեկան հաշվեկշիռները: Արբաբ ալ-թահ[ա]վիլի մուսթովֆին արհունի բոյուրաթին հանձնվող ամբողջ հումքի և կանխիկ դրամի վերահսկման պատասխանատուն էր, խասսեի մուսթովֆին՝ խասսեի ֆինանսներին:

վարչական բաժանման արդյունքում ձևավորված բեկլարբեկությունների անունները. տասներեք հարգարժան բեկլարբեկությունների շարքում, հինգերորդ տեղում նշվել են՝ Չուխուր-Սա'դ, իսկ վեցերորդում՝ Ղարաբաղ և Գյանջա (Գանձակ)²⁹ հայկական բեկլարբեկություններ:

Դասթուր ալ-մուլում-ում հայությունը վերաբերվող հատվածներն են՝ առաջին գլխի իններորդ ենթագլուխը, որում հիշատակվում է Ամիրշեքարբաշին հայությունեան և հատկապես Սպահանի հայությունեան կողմից վճարվող գումարը, և նշված է. «... տարեկան աննամի դիմաց հայերից յոթանասուն թուման, իսկ Զուղայի հայերից հիսուն թուման պիտի գանձվի...»³⁰: Երրորդ գլխի վեցերորդ ենթագլխում, մուղարրաբ ալ-խաղան³¹ մուսթովֆի սարքար խասեի աշխատանքի բացատրության մեջ նշված է, որ նրա պարտականություններից մեկը հատկապես «...հայերից ջիզիայի գումարի հավաքագրումն է...»³²: Գրքի չորրորդ գլխի ութերորդ ենթագլխում Մուհթասիբ ալ-մամալեքին³³ տրվող մավաջբեի և ոռսումի՝ երկրի զանազան տարածքների կողմից հատկացվող վճարումների կապակցությամբ շրջանների անունների թվարկման մեջ կարդում ենք. «... Երևանի բերդից՝ ինը թուման»³⁴, իսկ հինգերորդ գլխի իններորդ ենթագլխի հինգերորդ հոդվածի տասնհինգերորդ կետում դարձյալ հանդիպում ենք հետևյալ վկայությունը. «...Սպահանի հայություն Դարուղային իր աշխատանքի համար վճարվում է երեսուն թուման...»³⁵, իսկ գրքի վեցերորդ գլխի երկրորդ հոդվածի առաջին ենթագլխի հինգերորդ կետը վերաբերում է «Վեզիր-ե³⁶ մահալ-ե արամանե»-ին³⁷ (Հայկական շրջանների վեզիրի պարտականությունը), ուր ասվում էր որ նշված վեզիրի պարտականությունը և նրան հատկացված աշխատավարձը ևս նույնն է, ինչ մյուս վեզիրների համար, և որ նրա պարտականությունը հայ-

²⁹ دستورالملوك، رفيعا، ميرزا، նույն տեղում, էջ 186:

³⁰ Նույն տեղում, էջ 201:

³¹ Մուղարրաբ ալ-խաղան (مقرب الخاقان) — արհունիքում աշխատող բարձրաստիճան պաշտոնյաների կոչում:

³² Նույն տեղում, էջ 223:

³³ Մուհթասիբ ալ-մամալեք (محتسب الممالک) — Մուհթասիբը հնագույն իսլամական պաշտոնյաներից էր, որը հսկում է հասարակությանը և ուղղորդում նրան դեպի ճշմարիտ ուղղություն: Թագֆիրաբ ալ-մուլում-ում շեշտվում է նրա պարտականությունը՝ հավաքել ներկա գների ցանկը թագավորի մասնավոր բաժանմունքի կողմից ընդհանուր շուկաները վերահսկելու համար:

³⁴ Նույն տեղում, էջ 238:

³⁵ Նույն տեղում, էջ 259:

³⁶ Վեզիր (وزیر) — Սեֆյանների օրոք այսպես էին կոչվում այն բարձրաստիճան ֆինանսական պաշտոնյաները, որոնք մուսթովֆիների հետ միասին հսկում էին պետության, արհունիքի և բանակի ֆինանսների և զինվորականությանը տրվող ռոնիկների բաշխումը: Նրանք ամփիջապես պատասխանատու էին է՝թեմադ ալ-դավլեի առաջ և փաստորեն նրա ներկայացուցիչներն էին ֆինանսական գործերի վարչություններում:

³⁷ Նույն տեղում, էջ 275:

կական համայնքներից և բնակավայրերից հարկերի և տուրքերի հավաքագրումն ու գրանցումն է: Վեցերորդ գլխի երկրորդ հոգվածի երկրորդ ենթագլխի հինգերորդ կետը ևս վերաբերում է «Մուսթովֆի սարհադի և մուսթովֆի մահալ-ե արամանե»-ին³⁸ (Մուսթովֆի սարհադի և հայկական շրջանների մուսթովֆիի պարտականություններին): Նաև նշվում է, որ այդ մուսթովֆիի պարտականությունը նույնն է, ինչ մյուս մուսթովֆի սարհադին, ինչի համար ևս աշխատավարձ է նախատեսված, բնականաբար նա հաշվապահական պարտականություններ էր կատարում այն վեզիրների համար, որոնց ենթական էր:

Դասթուր ալ-մուլում-ը ևս հայկական երկու բեկլարբեկությունների, ինչպես նաև Սպահանի, ավելի ճիշտ՝ Նոր Զուղայում բնակվող հայության վերաբերող խնդիրներին անդրադառնում է վարչական գործունեության կազմակերպման և տնտեսական դիտանկյունից:

Չորրորդ սկզբնաղբյուրը սեֆյան ժամանակաշրջանի պատմական աշխարհագրությանը վերաբերող Մուհամմեդ Մոֆիդ Մուսթովֆի Բաֆեղիի Մոխթասար-ե մոֆիդ³⁹ («Օգտակար համառոտագրություն») աշխատությունն է: Գրքի հիմնական թեման սեֆյան Իրանի աշխարհագրությունն է. ներկայացված են Իրանի բոլոր վիլայեթները՝ ներքին բաժանումներով, քաղաքներով և ավելի փոքր շրջաններով: Մուսթովֆի Բաֆեղին օգտվել և մեծապես ազդվել է Համդալլահ Դազվինիի Նուզհաթ ալ-դուլուր աշխատությունից: Մոխթասար-ե մոֆիդի մեջ նկարագրվում են Սեֆյան Իրանի կազմի մեջ մտնող Այսրկովկասյան շրջաններն ու բնակավայրերը⁴⁰: Մոխթասար-ե մոֆիդ-ը գրվել է 1676 թվականին:

Գրքի երեք գլուխներում հանդիպում ենք հայկական բնակավայրերին վերաբերող նյութերի: Այսպես՝ «Արան և Մուղան» գլխի նախաբանում կարդում ենք. «Այս երկու վիլայեթների (Արանի և Մուղանի) սահմանները գտնվում են Արմենների (երկրի), Շիրվանի և Ազարբայջանից մինչև Կասպից ծովը, որի մեջ ընդգրկված է տասներեք քաղաք և մէկ բերդ»: Նույն գլխում. «...տեղյակ մարդիկ հաղորդել են, որ Արանի բնակավայրը (երկրի) հինգերորդ շրջանն է, որի սահմանները մի կողմից հասնում են Արմենների վիլայեթին և Շիրվանին, Կասպից ծովին և Ազարբայջանին: Այդտեղից Արաքս գետի ափից մինչև Կուր գետ համարվում է Արանի տարածքները»⁴¹: Նույն այդ գլխում «Բարդա»-ի մասին գրում է. «Որոշ պատմագիրներ նշել են, որ Բարդան մի քաղաք է, որի սահման-

³⁸ دستورالملوك ميرزا رفيعا، նույն տեղում, էջ 277:

³⁹ مختصر مفید (جغرافیای ایران زمین در عصر صفوی)، ایرج افشار با محمد مفید مستوفی همکاری محمد رضا ابوی مهريزی، تهران، 1390 بافقی،

⁴⁰ محمد مفید مستوفی بافقی، مختصر مفید، նույն տեղում, էջ 163-173:

⁴¹ Նույն տեղում, էջ 163:

ները հասնում են մինչև Արմենիա...»⁴²։ Արանի մաս կազմող բնակավայրերի մեջ նաև գտնում ենք Ղարաբաղի անունը՝ հետևյալ բացատրությամբ. «Մի երկիր է, որը բաժանվել է մի քանի շրջանների ու գյուղերի, այնտեղ էին բնակվում հարգարժան բեկլարբեկներից նրանք, որ մեծ թվով զինվորականներ ունեին իրենց հրամանի ներքո։ Պատմաբանները նաև հիշատակում են, որ այդ երկիրը գտնվում է Շիրվանի ու Ազարբայջանի միջև և Բարդալի ենթակա շրջաններից մեկն է»⁴³։ Արմենների երկրին կամ Հայաստանին վերաբերող այդ հատվածները խոստեն ապացույց են այդ բնակավայրերի հայկական լինելու փաստին։

Գրքի հաջորդ գլուխը, որը նույնպես վերաբերում է հայկական տարածքներին, կոչվում է «Արմեն (Մեծ և Փոքր)», որի տեղեկությունները Մոխրասար-ե մոֆիդ-ի հեղինակը ամբողջությամբ վերցրել է Համդալլահ Ղազվինիի Նուզհաթ ալ-դուլուբ աշխատությունից։ Այսպես. «Նուզհաթ ալ-դուլուբի հեղինակը արձանագրել է, որ Արմենիան երկու հատվածից է բաղկացած՝ փոքր և մեծ Արմենիաներից, Փոքր Արմենիան Իրանի սահմաններում չէ..., իսկ Մեծ Արմենիան գտնվում է Իրանի սահմաններից ներս...»⁴⁴, և ներկայացվում են Մեծ ու Փոքր Արմենիաների սահմանները։ Ապա կարդում ենք. «Մեծ Արմենիան (Մեծ Հայքը) երկրի չորրորդ շրջանն է, որը ունի տասնչորս քաղաք և վիլայեթ և երեք բերդ»⁴⁵։ Այնուհետև թվարկված են այդ վիլայեթների անունները՝ Ախլաթ, Անբուլթ, Արշիշ, Ալ-իթլաղ, Մուլազերդ, Բայան, Բերգրի, Աայն, Խուշաբ, Խորադին, Վոսթան, Սալմ, Ղիաման, Արմուքի(ղալե) բերդ, Վանի(ղալե) բերդ, Վլասջերդի(ղալե) բերդ և Հենգամ Աբադ»⁴⁶։ Նկատենք, որ այդ տեղանունները չեն համընկնում Մեծ Հայքի վարչատարածքային միավորներին։

Հաջորդ գլխում, Չուխուր-Սա'դին և Երևանին վերաբերվող հատվածում կարդում ենք. «Բոլորի համար պարզ է, որ դար-ալ-մուլք-ե Չուխուր-Սա'դը նույն ինքը Երևանն է, որ գտնվում է Զանգու գետի ափին։ Որոշ աշխարհագրական բաժանումներում այն պատկերացումը գոյություն ունի, որ այդ վիլայեթը Բարդալին ենթակա շրջաններից է, իսկ որոշներն էլ Բարդան են Արանի մաս համարել։ Իրականում ճիշտն այն է, որ Բարդան գտնվում է Արանի կազմում, իսկ Չուխուր-Սա'դը առանձին երկրամաս է, որ ընդգրկում է հինգ շրջան, երեք քաղաք և վիլայեթ ու վեց բերդ»⁴⁷։ Իսկ «Երևան» գլխի շարունակության մեջ կարդում ենք. «Մի վիլայեթ է, որին ենթակա են շատ տարածքներ, որ շրջապատված է

⁴² محمد مفید مستوفی بافقى، مختصر مفید، նույն տեղում, էջ 166:

⁴³ Նույն տեղում, էջ 168:

⁴⁴ Նույն տեղում, էջ 171:

⁴⁵ Նույն տեղում, էջ 171:

⁴⁶ Նույն տեղում, էջ 171-173:

⁴⁷ Նույն տեղում, էջ 180:

աներևակայելի գեղեցիկ և դրախտային այգիներով: Հպատակ բնակիչների մեծ մասը քրիստոնյաներ են»⁴⁸:

Կարևորելով Իրանի պատմական աշխարհագրությանը նվիրված այս աշխատության մեջ հայկական բնակավայրերին վերաբերող տեղեկությունները, հանգում ենք հետևյալ եզրակացության. Չուխուր-Սա'դը, առանձին երկրամաս լինելով, ենթակա չի եղել որևէ այլ շրջանի: Նաև հաստատվում է, որ ունենք նշված բնակավայրերի հայկականության հիմնավոր ապացույց:

Փաստորեն պարսկական պատմագրության վերոնշյալ աշխատություններն արտացոլում են ժէ.— ժԼ. դարերում հայ ժողովրդի հանդեպ սեֆյան Իրանի իշխանությունների վարած սոցիալ-տնտեսական ու վարչական կառավարման քաղաքականության հիմնական առանձնահատկությունները:

JILBERT MESHKANBARIANS

SAFAVID IRANIAN SOURCES ON ARMENIA OF THE 17TH – 18TH CENTURIES

Keywords: Safavid, sources, history of Armenia, Tarikhe Alam Araye Abbasi, Tazkirat al-Muluk, Dastur al-Muluk, Mokhtasar-e Mofid, socio-economic, administrative management, Chuhkur-Saad, Karabakh.

The Safavid Iranian historical sources of the 17th-18th centuries, namely Iskandar Bek Torkaman Munshi's *Tarikhe Alam Araye Abbasi*, Mirza Samia's *Tazkirat al-Muluk*, Mohammad Rafi Ansari's (or Mirza Rafia's) *Dastur al-Muluk* and Mohammad Mofid Mostofi Bafgi's *Mokhtasar-e Mofid*, provide valuable information on the history of Armenia within the Safavid state.

They reflect the main tendencies of the socio-economic and administrative policy of the Iranian authorities towards the Armenian people. They also characterize the consequences of the Persian rule in Armenia and the position taken by the local authorities on various issues concerning Armenians. Those sources enrich the history of Armenia in the given period with new data.

⁴⁸ محمد مفید مستوفی بافقى، مختصر مفید، ۱۸۰۹, ۱۸۰: ۱۸۰.

ЖИЛЬБЕРТ МЕШКАНБАРИАНС

ИРАНСКИЕ СЕФЕВИДСКИЕ ИСТОЧНИКИ ОБ АРМЕНИИ
XVII-XVIII ВЕКОВ

Ключевые слова: Сефевиды, история Армении, *Тарихе Алам Арайе Аббаси*, *Тазкират аль-Мулук*, *Дастур аль-Мулук*, *Мохтасар-е Мофид*, социально-экономическое, административное управление, Чухур-Саад, Карабах.

Исторические источники Сефевидского Ирана XVII-XVIII веков (“Тарихе Алам Арайе Аббаси” Искандара Бека Торкамана Мунши, “Тазкират аль-Мулук” Мирзы Самиа, Мохаммада Рафи Ансари или “Дастур аль-Мулук” Мирзы Рафии и “Мохтасар-е Мофид” Мохаммада Мофида Мостофи Бафги) содержат ценные сведения об Армении в составе государства Сефевидов. Они отображают основные тенденции социально-экономической и административной политики иранских властей по отношению к армянскому народу. Они также характеризуют последствия персидского владычества для Армении, позицию местных властей по различным вопросам по отношению к армянам, и обогащают историю Армении этого периода новыми данными.